

ՄՐՑՈՒՅԹ

Տվյալների պահպանման և մշակման համակարգի սարքավորումների ձեռք բերման, տեղադրման և համակարգի հետագա սպասարկման ծառայության ձեռք բերման

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է տվյալների պահպանման և մշակման համակարգի սարքավորումների ձեռք բերման, սարքավորումների տեղադրման և համակարգի հետագա սպասարկման ծառայության ձեռք բերման բաց մրցույթ:

Սույն մրցույթը բաղկացած է 4 լոտից՝

Լոտ 1. HPE սերվերային համակարգ

Լոտ 2. HPE տվյալների պահոց (storages)

Լոտ 3. Sun Switch համակարգ - սերվեր-պահոց համակցումն ապահովելու համար

Լոտ 4. VMware վիրտուալիզացիայի համակարգ -սերվերների համար վիրտուալիզացիա ապահովող ծրագրային ապահովում՝

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձիք, որոնք մրցույթի հայտի ներկայացման պահին ունեն համանման փորձ, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, համապատասխան լիցենզիաներ (պահանջի դեպքում): Լոտերի տեխնիկական նկարագրերի նվազագույն պահանջները կտրամադրվեն մրցույթի մասնակից կազմակերպությանը՝ տեղեկատվության գաղտնիության պայմանագիր ստորագրելուց հետո, որի համար մասնակիցը համապատասխան գրություն պետք է ուղղի arca@arca.am էլ. հասցեին:

Մրցույթի մասնակիցները կարող են ներկայացնել ավելի բարձր բնութագրերով առաջարկներ, ինչը կդիտվի որպես առավելություն:

Մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները՝

- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց

ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն HPE- ի գործընկերության Silver, Gold կամ Platinum մակարդակը հավաստող վկայական և HPE - ի կողմից արտադրողի հավաստագրման թերթիկը (MAF): :

Մրցույթի մասնակիցները յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացնեն`

1. Մրցույթի առարկայի գինը` ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
2. վճարման պայմանները, մատակարարման ժամկետները,
3. երաշխիքային սպասարկման պայմանները և ժամանակահատվածը:
4. Նմանատիպ մատակարարումների և աշխատանքների իրականացման փորձը հավաստող տեղեկություններ, գործընկերների ցանկ

Մատակարար կազմակերպությունը պետք է ունենա ASE կամ MASE որակավորմամբ առնվազն 2 աշխատակից` HPE Server և/կամ HPE Storage համակարգերի հետ աշխատելու համար:

Սարքավորումները պետք է ամբողջությամբ հավաքվեն և գործարկվեն տեղադրման վայրում HPE-ի կողմից հավաստագրված մասնագետների կողմից:

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկները ամփոփելը ցանկացած պահին դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից` առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք, 8-րդ հարկ) հասցեով, փակ ծրարով:

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 2023 թվականի սեպտեմբերի 25 ժամը 17.00-ն: